ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԴՊՐՈՑ՝ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՀԵՐՄՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ռ.ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐ 2022թ.

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեև Հայկական բանակի օր նշվում է ամեն տարվա հունվարի 28-ին, իրականում, Հայկական բանակի ստեղծման ակունքները հասնում են մինչև 1990-ի օգոստոս:

Խորհրդային Հայաստանի նորընտիր վարչապետ Վազգեն Մանուկյանը 1990թ.օգոստոսի 21-ին ստորագրեց թիվ 411 հրամանագիրը, որը կրում էր «Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի որոշումը ներքին գործերի նախարարությանն առընթեր հատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին»: Ընդ որում, ստորաբաժանումը ձևավորվելու էր կամավորության սկզբունքով:

Որոշման մեջ մասնավորապես ասվում էր. «Ելնելով Գերագույն խորհրդի կողմից հռչակված նպատակից՝ սկսելու անկախ պետականություն հաստատելու գործ-ընթացը, սահմանակից շրջանների պաշտպանության, խմբակային զինված հանցագործությունների դեմ պայքարի անհրաժեշտություն: Նախարարների խորհուրդը որոշում է ստեղծել հանրապետության պաշտպանության և հասարա-կական կարգի պահպանության հատուկ ստորաբաժանումներ»:

Ավելի հստակ՝ դա Հատուկ գունդն էր, որի առաջնային խնդիրներից էր սահմանա-մերձ շրջանների պաշտպանության և բնակչության անվտանգության ապահովումը:

Հետագայում Վազգեն Մանուկյանը ասել է. «Որպես վարչապետ ես ստորագրեցի հրամանը՝ ստեղծել պաշտպանության կոմիտե, հրամանը կար, չէի հրապարակում, սպասում էի, որ հարմար պահ լինի, Մոսկվայի գլուխը ուրիշ բանով զբաղված լինի, որ այդ հրամանը տանենք առաջ առանց վտանգելու քաղաքական մեր իրավիճակը: Եվ դա հաջողվեց, ստեղծվեց Պաշտպանության կոմիտեն»:

Սեպտեմբերի 2-ին ստեղծվեց կազմավորման հիմնադիր խումբ Վազգեն Սարգսյանի ղեկավարությամբ: Նա Գերագույն խորհրդում հանդես եկավ հայտարարությամբ և կոչ արեց անդամագրվել կառույցին: Սեպտեմբերի 3-ին առաջին զինվորագրվողները արդեն շարքեր էին կանգնել Գերագույն խորհրդի շենքի մոտակայքում: Երկու օրում գրվեց 1200 դիմում: Մանդատային հանձնաժողովը մինչև սեպտեմբերի 23-ը 2000-ից ընտրեց 800-ին:

1990թ.սեպտեմբերի 15-ին Խորհրդային Հայաստանի ՆԳ Նախարար Կառլոս Ղազարյանը՝ Վազգեն Սարգսյանի համաձայնությամբ, Հատուկ գնդի հրամանատար նշանակեց Սերգեյ Առաքելյանին: Սկզբանական շրջանում գունդը կազմված էր 26 վաշտից. մայրաքաղաքային վեց վաշտ, որոնք ընդգրկված էին առաջին և երկրորդ գումարտակներում, մեկ դեսանտային վաշտ և սահմանային հատուկ վաշտեր:

Սեպտեմբերի 24-ին գնդի կազմավորման ընթացքին ծանոթանալու համար հավաքական այցելեցին Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն Սարգսյանը, Վանո Սիրադեղյանը, հոգևորականներ: Այդ օրը կայացավ զինվորական քայլերգով ուղեկցվող շքերթ:

1991 թվականի դեկտեմբերի 5-ին Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը: Նա նորանկախ Հայաստանի առաջին պաշտպանության նախարարն էր՝ առանց նախարարության:

Այսպես դրվեց Հայկական բանակի հիմքը:

1992թ-ի հունվարի 28-ին, կառավարությունը ընդունեց «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության մասին» որոշում՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց Ազգային բանակի ստեղծումը: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին Ներքին գործերի նախարարության միլիցիայի

պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինվորական կոմիսարիատը: Քիչ ավելի ուշ հիմնվեց Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ Գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները: 1992թ.-ի մայիսին պաշտպանության նախարարությունը սկսեց առաջին զորակոչը հանրապետության տարածքում՝ հիմք դնելով բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին:

Հայաստանի զինված ուժերը կազմված են պաշտպանության նախարարությունից, զինված ուժերի գլխավոր շտաբից, երեք բանակային կորպուսներից և երկու հատուկ նշանակության կորպուսներից, ինչպես նաև տարբեր զորամասերից և ստորա-բաժումներից: Պաշտպանության նախարարությունը իր հերթին կազմված է.

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
2. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ
3. ՊՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

    ա) ՊՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
    բ) ՊՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
    գ) ՊՆ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
    դ) ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱ-ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
    ե) ՊՆ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
    զ) ՊՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
    է) ՊՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
    ը) ՊՆ ԿԱԴՐԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
    թ) ՊՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
    ժ) ՊՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆՆԵՐ

ա. ՊՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

բ. ՊՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

գ. ՊՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

դ. ՊՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ե. ՊՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

զ. ՊՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

է. ՊՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանության նախարարության վարչությունները և ծառայությունները ըստ իրենց առջև դրած խնդիրներին իրականացնում են հետևյալ գործառույթները:

ՊՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրականացնում է ՀՀ զինված ուժերի նյութատեխնիկական ապահովման, նախարարության գնումների գործընթացի կազմակերպման ու վերահսկողության գործառույթներ:

ՆՏԱԳՎ լիազորությունները սահմանվում են օրենքով, ՀՀ նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, ՀՀ կառավարության որոշումներով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով:

ՆՏԱԳՎ-ն իրավունք ունի ՀՀ անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

ՆՏԱԳՎ-ի գործառույթներից են՝

1. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով զինված ուժերի համար սպառազինության ու ռազմական տեխնիկայի, պարենային, իրային և այլ ունեցվածքի, ինչպես նաև նյութական պաշարների գնումների կազմակերպումը,
2. նախարարության նյութատեխնիկական ապահովման տարեկան գնման պլանի մշակման աշխատանքներին մասնակցելը,
3. ռազմական տեխնիկայի և սպառազինության և այլ նյութական միջոցների կուտակման կազմակերպումը և ապահովումը և այլն:

ՊՆ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ֆինանսա-բյուջետային վարչությունն ապահովում է Նախարարության համակար-գում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆինանսատնտեսական ոլորտին առնչվող պարտականությունների ամբողջական իրականացումը:

Վարչության նպատակներն ու խնդիրներն են.

1. բյուջետային համակարգի գծով իրավական կարգավորման ակտերի և մեթոդաբանության համաձայն բյուջետային գործընթացի կազմակերպման ուղղությամբ աշխատանքների ապահովումը,
2. լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան կառավարման մարմինների, զորամասերի և զինվորական հաստատությունների հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման ուղղությամբ աշխատանքների ապահովումը,
3. Նախարարության ֆինանսական հոսքերի կառավարման նկատմամբ նախնական վերահսկողության ապահովումը,
4. ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ՀՀ օրենքների և այլ ակտերի դրույթների պահպանման ապահովումը:

Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. Ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող ռազմավարական ծրագրերի մշակման, տարեկան միջոցառումների ծրագրի ճշգրտման և վերանայման աշխատանքներին անմիջական մասնակցությունը,
2. Առաջիկա տարվա բյուջետային գործընթացի կազմակերպումը, այդ թվում միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային հայտերի կազմման համար անհրաժեշտ ծախսակազմմանն և հաշվարկների կատարման մեթոդական ցուցումների և ուղեցույցների, բյուջետային ֆինանսավորման հայտերի, պահպանման նախահաշիվների ձևերի մշակումը (ըստ անհրաժեշտության) և տրամադրումը կառավարման մարմիններին և պատասխանատու ստորաբաժանումներին,
3. Կառավարման մարմիններից և պատասխանատու ստորաբաժանումներից միջնաժամկետ ծախսային ծրագրերի առաջիկա բյուջետային տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերի ստացումը, դրանց վերլուծությունը և ֆինանսական ծախսային ցուցանիշների ծրագրավորումը,
4. Տարեկան ծախսերի նախահաշիվների կատարումն ապահովող միջոցառումների մշակումը և բյուջետային հատկացումների եռամսյակային համամասնությունների ծրագրավորումը (սահմանված կարգով կառավարման մարմինների և պատասխանատու ստորաբաժանումների հետ համատեղ),
5. Նախարարության դրամական միջոցների կառավարման և ծախսերի ֆինանսավորման գործի կազմակերպման ապահովումը,
6. Նախարարության տնօրինության ներքո գտնվող դրամական միջոցների լիազոր մարմնի գանձապետական միասնական հաշվով սահմանված կարգով վճարումների կատարումը,
7. Վարչության իրականացրած ֆինանսատնտեսական գործառնությունների վերաբերյալ սահմանված կարգով հաշվապահական գրանցումների ապահովումը:

ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պաշտպանության նախարարության պաշտպանական քաղաքականության և միջազգային համագործակցության գլխավոր վարչությունը ՀՀպաշտպանության նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որի գործունեությունն ուղղված է ապահովելու նախարարության իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների և նպատակների, դրանց հիման վրա համապատասխան ծրագրերի մշակման և իրականացման,պաշտպանության ոլորտի քաղաքականությանը համահունչ միջազգային համագործակցության պլանավորման և միջազգային պարտավորությունների կատարման, ինչպես նաև պաշտպանության ոլորտի միջազգային իրավապայմանագրային դաշտի ձևավորման գործընթացների համակարգումը:

Վարչությունն իր նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. նախարարությանը վերաբերող մասով մշակում, համաձայնեցնում և անվտանգության խորհրդի հաստատմանն է ներկայացնում պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները և նպատակները,
2. համակարգում է ներպետական և միջազգային մակարդակներում պաշտպանության ոլորտի գերակայությունները, խնդիրները և առաջնահերթությունները սահմանող հայեցակարգային և ծրագրային բնույթի փաստաթղթերի մշակման, համաձայնեցման, հաստատման և իրականացման գործընթացները,
3. կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով պլանավորում, կազմակերպում և համակարգում է երկկողմ ու բազմակողմ ձևաչափով բոլոր ուղղություններով ՀՀ պաշտպանության նախարարության միջազգային համագործակցությունը, ապահովում է պաշտպանության ոլորտում ՀՀ դաշնակցային ու գործընկերային հարաբերությունների համաչափ և հավասարակշռված
4. մշակում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների համապատասխան կառույցների հետ համագործակցության վերաբերյալ հայեցակարգային դրույթներ և մոտեցումներ, ուսումնասիրում և առաջարկներ է ներկայացնում միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ,
5. ապահովում է ՀՀ պաշտպանության ոլորտի քաղաքականության և միջազգային համագործակցության իրականացման հետ կապված փոխգործակցությունը ՀՀ պետական կառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների համապատասխան կառույցների և պաշտոնատար անձանց հետ,
6. համակարգում է ՀՀ զինված ուժերի համապատասխան ստորաբաժանումների՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցման, այդ թվում՝ միջազգային զորավարժություններին և վարժանքներին մասնակցության աշխատանքները,

7. համակարգում է սպառազինությունների վերահսկման և պաշտպանության ոլորտի թափանցիկության ուղղությամբ ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը:
8. Միջազգային պաշտպանական (ռազմական) համագործակցության միջոցով ՀՀ դաշնակցային ու գործընկերային հարաբերությունների զարգացումը հնարավորություն է ընձեռում.

Ռուսաստանի Դաշնության ուղղություն. Պաշտպանության ոլորտում հայ-ռուսական դաշնակցային համագործակցությանը հաղորդել առավել համընդգրկուն և երկարաժամկետ բնույթ, հստակեցնել համատեղ պլանավորման և փոխգործակցության, ռազմատեխնիկական, ռազմակրթական համագործակցության, ՀՀ ԶՈՒ սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրման, միացյալ խմբավորումների և միավորված համակարգերի կիրառման մեխանիզմները:

ՀԱՊԿ-ի ուղղություն. Զարգացնել ՀԱՊԿ ռազմական բաղադրիչը, ձևավորել ռազմական ղեկավարման և կառավարման մեխանիզմներ: Համապատասխան ուժերի ստեղծմամբ ՀԱՊԿ-ին հաղորդել ճգնաժամային իրավիճակներին արագ արձագանքելու իրական կարողություններ, արդյունքում մեծացնելով ՀԱՊԿ ռազմաքաղաքական դերն ու նշանակությունը:

ՆԱՏՕ-ի ուղղություն. Ապահովել ՆԱՏՕ/գործընկերներ ձևաչափով զանազան անհատական և համագործակցային ծրագրերին ՀՀ ՊՆ համակարգի ներգրավումը, ներդրում կատարել պաշտպանական վերափոխումների բնագավառում, ապահովել միջազգային խաղաղապահ առաքելություններին ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումների մասնակցությունը, զարգացնել ՀՀ ԶՈՒ փոխգործունակ կարողությունները:

ԵԱՀԿ-ի ուղղություն. Ապահովել Լեռնային Ղարաբաղում և հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակի մասին միջազգային հանրության իրազեկումը, սպառազինությունների վերահսկման ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, ՊՆ համակարգում բարեվարքության ամրապնդումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը:

ՄԱԿ-ի ուղղություն. Ապահովել միջազգային խաղաղապահ առաքելություններին ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումների ներգրավումը, ՀՀ ԶՈՒ հեռարշավային տեղակայելի բուժապահովման և ինքնաշեն պայթուցիկ սարքերի վնասազերծման կարողությունների թիրախային զարգացումը, պաշտպանության ոլորտում թափանցիկության ուղղությամբ ՀՀ ստանձնած միջազգային հանձնառությունների կատարումը:

ԱՄՆ-ի ուղղություն. Ապահովել պաշտպանության ոլորտում ԱՄՆ հետ երկկողմ համագործակցության ռազմավարական գործընկերության բնույթը, միաժամանակ «Միջազգային ռազմական կրթություն և պատրաստություն» և «Միջազգային ռազմական ֆինանսավորում» ծրագրերով ապահովելով ՀՀ ԶՈՒ անձնակազմի կրթությունը և վերապատրաստումը:

Երկկողմ ձևաչափով այլ ուղղություններ. Համագործակցությունը ծառայեցնել պաշտպանության և անվտանգության ոլորտում տարածաշրջանային անվտանգության ապահովման ուղղությամբ ռազմաքաղաքական դիրքորոշումների մերձեցմանը, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության շարունակական ամրապնդմանն ու բազմազանեցմանը, պաշտպանական բարեփոխումների առանձին ոլորտներում առաջընթացի արձանագրմանը և ՀՀ զինված ուժերում միջազգային լավագույն փորձի ներդրմանը:

ՊՆ ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչությունը նախարարության աշխատակազմից դուրս կառուցվածքային ստորաբաժանում է, որը խաղաղ և պատերազմի ժամանակ ապահովում է կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման ուղղությամբ ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության իրականացումը:

Վարչության խնդիրներն են.

1. զորքերի մարտական պատրաստության բնականոն ընթացքի համար անհրաժեշտ հողային, շենքային պայմանների, կահավորանքի և վառելիքաէներգետիկ ռեսուրսների ապահովումը,
2. զորքերի բնակավորման ոլորտում Նախարարության կողմից տարվող քաղաքականության մշակումն ու իրագործումը,
3. զորքերի բնակավորման համար հատկացված նյութական արժեքների ճիշտ և նպատակային ծախսի իրականացման ապահովումը,
4. զորքերի և զինծառայողների բնակարանային ապահովման նպատակով կապիտալ շինարարության, կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքների պլանավորման և իրականացման ապահովումը,
5. կապիտալ շինարարության և Նախարարության այլ կարիքների համար անհրաժեշտ հողատարածքների ձեռքբերումը, զորանոցաբնակելի ֆոնդերի պետական գրանցման ապահովումը:

Վարչությունն իր և խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. Նախարարության զարգացման հեռանկարային ծրագրերին համապատասխան շինարարական առաջնահերթ, եռամյա միջնաժամկետ և հեռանկարային ծախսային ծրագրերի մշակումը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կապիտալ ներդրումների ծավալներից և ռազմավարական ծրագրերով սահմանված ակնկալվող արդյունքներից,
2. շինարարական ծրագրերի կազմման, համաձայնեցման և հաստատման գործընթացը համակարգելու նպատակով ստացված հայտերի ուսումնասիրման և քննարկման աշխատանքների կազմակերպումը,
3. զինավանների գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքների կազմակերպումը,
4. ընթացիկ վերանորոգման տարեկան ծրագրերի մշակումը,
5. Նախարարության շինարարական աշխատանքների իրականացման գործընթացի համակարգումը,

6. կապիտալ շինարարության, կապիտալ վերանորոգման և ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի հաշվարկների կազմումը և դրանց ձեռքբերման կազմակերպումը,
7. հողային, զորանոցաբնակելի ֆոնդերի, ինժեներական կոմունիկացիաների, սարքավորումների և նյութերի նպատակային և ճիշտ շահագործման նկատմամբ մշտական հսկողության սահմանումը,
8. Նախարարության կարիքների համար անհրաժեշտ անշարժ գույքի ձեռքբերման և օտարման աշխատանքների իրականացումը,
9. Նախարարությանն անհրաժեշտ էներգառեսուրսների տարեկան և հեռանկարային պահանջարկի հաշվարկումն ու դրանց խնայողաբար օգտագործման միջոցառումների մշակումը,
10. զինծառայողների բնակարանային հաշվառման և նրանց ծառայողական բնակարաններով ապահովման գործընթացի կազմակերպումը,
11. բնակավորման ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի մշակման և վերանայման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,
12. զորանոցագրասենյակային գույքի պլանավորման, ձեռքբերման և զորքերին հատկացման աշխատանքների կազմակերպումը, կապալառու կազմակերպությունների կողմից թողարկվող արտադրանքի որակի նկատմամբ հսկողության սահմանումը:

ՊՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտի վարչությունը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական ծառայությունների մատուցմամբ աջակցում է ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության արդյունքների մեծացմանը և բարելավմանը՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման և բարելավման միջոցով:

ՀՀ ՊՆ ներքին աուդիտի վարչությունը ՀՀ ՊՆ աշխատակազմից դուրս կառուցվածքային ստորաբաժանում է, որն ապահովում է ՀՀ ՊՆ համակարգի բոլոր ստորաբաժանումների, ինչպես նաև բաժնետոմսերի կառավարումը ՀՀ պաշտպանության նախարարությանը վերապահված ընկերությունների, հիմնադրամների և այլ կազմակերպությունների ներքին աուդիտի իրականացման ուղղությամբ ՀՀ պաշտպանության նախարարության գործունեությունը՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի, համապատասխան ենթաօրենսդրական ու այլ նորմատիվային իրավական ակտերի, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների, ինչպես նաև ներքին աուդիտի ստանդարտների, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների և ՀՀ ՊՆ ներքին աուդիտի կանոնակարգի:

Վարչության խնդիրներն են.

1. ՀՀ ՊՆ համակարգի ստորաբաժանումների ֆինանսատնտեսական գործունեության՝ օրենքներին և իրավական այլ ակտերին, ինչպես նաև դրանց գործունեությանն առնչվող այլ պայմաններին համապատասխանության ուսումնասիրումը,

2. ՀՀ ՊՆ համակարգի ստորաբաժանումների զորային տնտեսության գնահատումը՝ տնտեսման, օգտավետության և արդյունավետության տեսանկյուններից,
3. ՀՀ ՊՆ համակարգի ստորաբաժանումների ֆինանսական կառավարման և ներքին հսկողության համակարգերի արդյունավետության և օգտավետության գնահատումը,
4. ՀՀ ՊՆ համակարգի ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության, իրավական ակտերին և հրամաններին համապատասխանության գնահատումը,
5. ՀՀ ՊՆ համակարգի ստորաբաժանումների ֆինանսատնտեսական գործունեության բարելավման ուղղությունների և հնարավոր լուծումների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. իրականացնում է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի ստորաբաժանումների բոլոր գործառույթների աուդիտի կազմակերպումն ու իրականացումը,
2. ուսումնասիրում է նախարարության գործունեության ֆինանսական կառավարմանն ու հսկողությանն առնչվող գործառույթները կարգավորող օրենսդրական ակտերի գործնականում կիրառման արդյունքները, անհրաժեշտության դեպքում մշակում և ներկայացնում է դրանց կատարելագործման վերաբերյալ համապատասխան առաջարկություններ,
3. իրականացնում է աուդիտի արդյունքների համախմբումն ու ընդհանրացումը, ներկայացնում է արձանագրված ռիսկերի նվազեցման, հսկողական համակարգի սխալների շտկման և բացթողումների լրացման վերաբերյալ առաջարկություններ,
4. իրականացնում է ներքին աուդիտի հաշվետվությունների կատարման վերահսկողություն,
5. քննարկում և սահմանված կարգով ընթացք է տալիս Վարչությանը հասցեագրված դիմումները, առաջարկություններն ու բողոքները:

ՊՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը նախարարության աշխատակազմից դուրս կառուց-վածքային ստորաբաժանում է:
Վարչության լիազորությունները սահմանվում են օրենքներով և իրավական այլ ակտերով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով:
Վարչությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է տեղեկատվության օպերատիվության, գաղտնիության, հավաստիության, ամբողջականության և իրավիճակի գնահատման սկզբունքներով:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

1. Նախարարության համակարգում միասնական և արդյունավետ տեղեկատվական քաղաքականության ապահովումը,
2. բանակ-հասարակություն կապի ամրապնդումն ու զարգացումը,
3. երիտասարդության հայրենասիրական դաստիարակության, ազգային ինքնագիտակցության մակարդակի բարձրացումը,
4. տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում պետական և ոչ պետական համապատասխան մարմինների ու կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության ձևավորումը և զարգացումը, փորձի փոխանակումը, համակարգված միջոցառումների իրականացումը,
5. Նախարարության համակարգի լրատվամիջոցներով («Հայ զինվոր» հանդես, «Զինուժ» հեռուստածրագիր, «Ասպար» ռադիոհանդես, պաշտոնական կայքէջ և տեղեկատվության տարածման այլ միջոցներ) պաշտպանական գերատեսչությանը վերաբերող տեղեկատվության հանրային իրազեկումը, պաշտպանական քաղաքականության թափանցիկության ապահովումը,
6. Նախարարության համակարգի լրատվամիջոցներում պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակման կանխումը,
7. բանակ-հասարակություն կապի զարգացմանն ու ամրապնդմանը նպատակաուղղված աշխատանքների մշակումն ու կազմակերպումը, փոխվստահության մթնոլորտի ապահովումը,
8. միջազգային փորձի կիրառմամբ, նպատակային ծրագրերի իրականացմամբ բանակի նկատմամբ հասարակական կառույցների քաղաքացիական վերահսկողության խորացմանն օժանդակելը,
9. հասարակական կազմակերպությունների, պետական և ոչ պետական մարմինների հետ երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակությանն նպատակաուղղված ծրագրերի մշակումը և հասարակայնության լայն խավերի ընդգրկումով պետական տոներին ու զորատեսակների մասնագիտական օրերին նվիրված միջոցառումների կազմակերպումը,
10. Նախարարության գործունեության, միջազգային ռազմական համագործակցության, նրա վարկանիշի առնչությամբ հանրության տարբեր խմբերի վստահության աստիճանի հետազոտումը, դրանց արդյունքների հիման վրա հայրենասիրական ոգու ամրապնդմանը նպաստող միջոցառումների իրականացումը (հեռուստառադիոհաղորդումներ, տեսաֆիլմեր, գովազդային տեսահոլովակներ, մշակութային ծրագրեր, ռազմամարզական խաղեր և այլն),

Վարչությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. մասնակցում է տեղեկատվական անվտանգության ոլորտին առնչվող հայեցակարգային, նորմատիվ-իրավական փաստաթղթերի նախագծերի մշակմանը,

2. իրականացնում է բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ընդլայնմանը նպատակաուղղված ծրագրեր,
3. մշակում և իրականացնում է հանրության հայրենասիրական ոգու բարձրացմանը նպաստող միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, թողարկում տեսանյութեր, հեռուստառադիոհաղորդումների, հրապարակումների և համացանցի միջոցով ապահովում է հանրային իրազեկում,
4. իրականացնում է ՀՀ զինված ուժերի գործունեության, պաշտպանական քաղաքականության վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների, համացանցի և տեղեկատվական այլ աղբյուրների մշտադիտարկումը,
5. կազմակերպում և իրականացնում է Նախարարության համակարգի լրատվամիջոցներում պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակման կանխարգելմանը միտված միջոցառումներ, տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերով ուսումնամեթոդական պարապմունքներ,
6. ապահովում է համացանցում Նախարարության պաշտոնական կայքի տեղեկատվական սպասարկումն ու զարգացումը,
7. իրականացնում է սոցիոլոգիական հետազոտություններ հանրության տարբեր խավերի և թիրախային խմբերի շրջանում,
8. աջակցում է հանրակրթական ուսումնական հաստատություններում նախնական զինվորական պատրաստության դասավանդման բարելավմանը նպատակաուղղված աշխատանքներին:

ՊՆ ԿԱԴՐԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչությունը խաղաղ և պատերազմական ժամանակ ապահովում է ՀՀ զինված ուժերի կադրային քաղաքականության մշակման, դրա իրականացման, վերահսկման,մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման, անձնակազմի կատարելագործման,կադրերի պատրաստման, վերապատրաստման գործընթացները, կադրերի ընտրության, առաջխաղացման, ռազմական կրթության և գիտության զարգացման քաղաքականության մշակման, ինչպես նաև զինվորական և քաղաքացիական ծառայության ընդունման և ծառայությունից արձակման (ազատման) գործընթացները կազմակերպելու ուղղությամբ ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության իրականացումը և հանդիսանում է վերահսկող մարմին ՊՆ համակարգի կադրային օղակների համար:

Համագործակցում է միջազգային խորհրդատվական կազմակերպությունների, օտարերկրյա պաշտպանական գերատեսչությունների անձնակազմի կառավարման մարմինների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ուսումնական հաստատությունների ղեկավարության, նախարարության և ենթակա

մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ կադրային աշխատանքների վարման և ռազմական կրթության կազմակերպման ուղղությամբ ծառացած խնդիրները լուծելու համար:

Իրականացնում է նախարարության և ենթակա մարմնի, պետական հիմնարկների, կազմակերպությունների՝ մրցութային կարգով համալրման ենթակա թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները:

Իրականացնում է նախարարության համակարգի կառուցվածքային, քաղաքացիական ծառայության և զինվորական պաշտոնների հաստիքային, ինչպես նաև հաստիքացուցակների հաստատման հրամանների նախագծերի նախապատրաստական աշխատանքները:

Լիազորությունների շրջանակներում կազմակերպում է զինված ուժերի սպայական կազմի ատեստավորման անցկացումը, առաջխաղացման ռեզերվի կազմման, զինծառայողներին պաշտոնի նշանակելու, զինվորական ծառայության անցնելու պայմանագրեր կնքելու, զինվորական կոչումներ շնորհելու (աստիճանազրկելու), պաշտոնից ազատելու, կադրերի տրամադրության տակ թողնելու, պահեստազոր արձակելու գործընթացները:

Հսկողություն է իրականացնում նախարարության համակարգի ստորաբաժանումների կողմից սպայական և ենթասպայական կազմերի զինվորական ծառայություն անցնելու հետ կապված կադրային հարցերի օրինականության ապահովման, ժամանակին և ճշտորեն կատարման նկատմամբ:

Մշակում է զինվորական ծառայությունը գրավիչ դարձնելու աշխատանքների ուղղությունները և աջակցում զինված ուժերի համալրման նպատակով թեկնածուներ հավաքագրելու համար զինված ուժերի գլխավոր շտաբի, նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և ռազմաուսումնական հաստատությունների (այսուհետ ՌՈՒՀ) կողմից մշակված ծրագրերի շրջանակներում միջոցառումների կազմակերպման և իրականացման աշխատանքներին:

Իրականացնում էՌՈՒՀ-երի ուսումնական ծրագրերի (ՀՀ ուսումնական հաստատությունների ռազմական, ռազմամասնագիտական առարկաների ծրագրերի) ուսումնասիրություն՝ դրանք պահանջվող մակարդակին համապատասխան կազմելու և (կամ) բարեփոխելու նպատակով:

Վերահսկում է ռազմամարզական վարժարաններում, ուսումնական հաստատությունների ռազմական ամբիոններում (ֆակուլտետներում) կադրերի պատրաստման և վերապատրաստման ծրագրերով ուսումնառության գործընթացը:

Վերահսկում է օտարերկրյա պետությունների ՌՈՒՀ-երում կադրերի պատրաստման և վերապատրաստման նպատակով ՀՀ ԶՈՒ թեկնածուների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված առկա և հեռավար դասընթացների իրականացումը:

Նախապատրաստում է անձնակազմի կառավարմանն առնչվող օրենքներում և ենթաօրենսդրական իրավական ակտերում փոփոխություններ ուլրացումներ կատարելու մասին առաջարկներ:

Մշակում և սահմանված կարգով հաստատման է ներկայացնում անձնակազմի կառավարման և ռազմակրթական բնագավառին առնչվողօրենքներից կամ այլ իրավական ակտերից բխող նախարարի հրամանների և դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասինհրամանների նախագծերը:

Իրականացնում է նախարարության համակարգի անձնակազմին և ՊՆ միջնորդությամբ այլ անձանց պետական պարգևներով և գերատեսչական մեդալներով պարգևատրման նախապատրաստական աշխատանքները:

ՊՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությունը կազմավորվել է 1996 թվականին որպես իրավաբանական բաժին, այնուհետև 2001 թվականի մայիսի 11-ից վերանվանվել է վարչություն, որի առնչությամբ մայիսի 11-ը նշում է որպես վարչության տարեկան տոն օր:

Վարչության խնդիրներն են.

1. ՀՀ պաշտպանության նախարարության նորմաստեղծ և իրավակիրառ գործունեության կազմակերպումն ու իրականացումը,
2. ՀՀ զինված ուժերում իրավական աշխատանքների համակարգումն ու ղեկավարումը,
3. զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, նրանց հավասարեցված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացումը,
4. դատահիրավական համակարգերի մարմիններում ՀՀ պաշտպանության նախարարության շահերի պաշտպանության իրականացումը և քաղաքացիա-իրավական հարաբերություններում ՀՀ պաշտպանության նախարարության մասնակցության իրավական բաղադրիչների ապահովումը:

Վարչությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. ՀՀ պաշտպանության ոլորտին և պաշտպանության շահերին առնչվող նորմատիվ իրավական ակտերի մշակման, համաձայնեցման և ներկայացման գործընթացը,
2. ՀՀ պաշտպանության նախարարություն ներկայացված իրավական ակտերի, ՀՀ պաշտպանության նախարարի և նրա տեղակալների հրամանների, պաշտպանության ոլորտին առնչվող միջազգային պայմանագրերի նախագծերի փորձաքննությունը, նորմատիվ բնույթ չկրող այլ փաստաթղթերի քննարկումը և առաջարկությունների ներկայացումը,
3. ՀՀ պաշտպանության ոլորտը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանման տրամադրումը,
4. ՀՀ զինված ուժերում հանցագործությունների, արտակարգ դեպքերի և պատահարների կանխարգելման նպատակով իրավասու մարմինների հետ համագործակցությունը,
5. ՀՀ զինված ուժերի գործունեության իրավական ապահովման ուղղությամբ մեթոդական և գործնական միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը,

6. ՀՀ պաշտպանության ոլորտին առնչվող իրավական բնույթի հարցերով քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկումն ու դրանց լուծումների տրամադրումը:

ՊՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչությունը ՀՀ պաշտպանության նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն ապահովում է զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած), անհայտ կորած կամ գերության մեջ գտնվող զինծառայողների ընտանիքների անդամների առողջապահական և սոցիալական պաշտպանության ոլորտներում Պաշտպանության նախարարության խնդիրների կատարումը:
Վարչության խնդիրներն են՝

1. Սոցիալական պաշտպանության և առողջապահական ոլորտներում Պաշտպանության նախարարության քաղաքականության մշակումն ու իրականացման ապահովումը, ինչպես նաև դրա շրջանակներում իրականացվող միջոցառումների մշտադիտարկումը,
2. սոցիալական պաշտպանության և առողջապահական ոլորտներում Պաշտպանության նախարարության հանրային իրազեկման քաղաքականությունից բխող միջոցառումների մշակումն ու իրականացումը,
3. զինծառայողների, նրանց ընտանիքների և նրանց հավասարեցված անձանց սոցիալական և առողջապահական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նրանց կյանքի որակի և բարեկեցության շարունակական բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
4. զինծառայողների բնակարանային ապահովման և բնակարանային պայմանների բարելավման բնագավառներում Կառավարության քաղաքականությունից բխող միջոցառումների իրականացումը,
5. զինծառայողների կենսաթոշակային ապահովման բնագավառում Կառավարության քաղաքականության իրականացման ապահովումը:

Վարչության հիմնական գործառույթներն են.

1. կազմակերպում է պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստացած անձանց հաշվառումը և այդ կարգավիճակից բխող փաստաթղթերի տրամադրումը, զինվորական կենսաթոշակների, նպաստների, փոխհատուցումների, պարգևավճարների, միանվագ դրամական օգնության, և օրենքով սահմանված այլ վճարների և սոցիալական երաշխիքների նշանակման, վերահաշվարկման և տրամադրման գործընթացը,
2. ապահովում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների և փոխհատուցումների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության աստիճանի բարձրացմանն ուղղված

աշխատանքների իրականացումը, գործող և նոր ընդունված օրենսդրական ակտերի օպերատիվ և հանրամատչելի պարզաբանումը,

3. ապահովում է Պաշտպանության նախարարության համակարգի պայմանագրային զինծառայողների և այլ շահառուների բնակարանային ապահովման և բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ պետական նպատակային ծրագրերի իրականացումը,
4. օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմում և Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ է ներկայացնում հատուցման գործերը,
5. մշակում է զինծառայողների առողջության բարելավման, հիվանդությունների կանխարգելման և բուժման, հաշմանդամության և մահացության նվազեցմանն ուղղված նպատակային ծրագրերը, հսկողություն է սահմանում դրանց ներդրման և իրագործման նկատմամբ,
6. ապահովում է ռազմաբժշկական հաստատությունների կողմից բնակչության բժշկական օգնության և սպասարկման պետական պատվերի տեղադրման հայտերի ներկայացումը, մշակում և սահմանված կարգով հաստատման է ներկայացնում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների կարգը և պայմանները,
7. մշակում և իրականացնում է վետերանների՝ քաղաքացիական կյանքին ինտեգրման, հաշմանդամ վետերանների սոցիալական ներառման, նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության վերականգնման և պահպանմանն ուղղված նպատակային ծրագրեր,
8. իրականացնում է պաշտպանության ոլորտում սոցիալական և առողջապահական կարիքների գնահատում, սոցիալական և առողջապահական արտոնությունների կիրառման վիճակի ուսումնասիրություն, և դրանց հիման վրա ներկայացնում է սոցիալական և իրավական երաշխիքների բարելավման, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկներ:

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲ

Հայաստանի զինված ուժերը կազմված են հետևյալ մասնագիտացված զորքերից.

ցամաքային զորքեր,
ռազմաօդային ուժեր,
հակաօդային պաշտպանության զորքեր:

Ցամաքային զորքերն իրենց հերթին բաղկացած են հետևյալ զորատեսակներից.

մոտոհրաձգային զորքեր,
տանկային զորքեր,
հրթիռային և հրետանի զորքեր,
օդադեսանտային զորքեր,
ինժեներական զորքեր,
կապի զորքեր:

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբը ղեկավարում է գլխավոր շտաբի պետը՝ իր տեղակալների, գլխավոր շտաբի վարչությունների, ծառայությունների և բաժինների միջոցով:

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:

1. ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ
2. ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
3. ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
4. ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ- ՀՀ ԶՈՒ ԳՇ ՕՊԵՐԱՏԻՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
5. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

ա. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՕՊԵՐԱՏԻՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

բ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

գ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

դ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ե. ՀՀ ԶՈՒ ԳՇ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

զ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ԿԱՊԻ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ԱԿՀ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

է. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ը. ՀՀ ԶՈՒ ԳՇ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

թ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԶՈՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ժ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՌԱԴԻԱՑԻՈՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ի. ՀՀ ԶՈՒ ԳՇ ԶՈՐՔԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

լ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

խ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ծ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

կ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

h. ՀՀ ԶՈՒ ԳՇ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ձ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ԹԻԿՈՒՆՔԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ղ. ՀՀ ԶՈՒ ԳՇ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

6. ՀՀ ԶՈՒ ԳՇ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

ա. ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայություն

բ. ԶՈՒ ԳՇ գաղտնիության ռեժիմի ապահովման ծառայություն

գ. ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային ծառայություն

դ. ԶՈՒ ԳՇ ստանդարտացման և չափագիտության ծառայություն

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՕՊԵՐԱՏԻՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ ԳՇ օպերատիվ գլխավոր վարչությունը գլխավոր շտաբի կառուցվածքային առաջատար ստորաբաժանում է, որն ապահովում է խաղաղ և պատերազմական պայման-ներում զինված ուժերի առջև դրված խնդիրների պլանավորումը, զորքերի (ուժերի) օպերատիվ կառավարումը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի վարչական ապարատը գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանում է, որը խաղաղ և պատերազմի ժամանակ ապահովում է գլխավոր շտաբի կազմակերպչական, վարչաիրավական և վերլուծական-հսկողական գործառույթների իրականացումը:
Վարչական ապարատի լիազորությունները սահմանվում են օրենքներով և այլ իրավական ակտերով, ՀՀ պաշտպանության նախարարի և ԶՈՒ գլխավոր շտաբի պետի հրամաններով ու վարչական ապարատի կանոնադրությամբ:

Վարչական ապարատի խնդիրներն ու գործառույթներն են.

1. ԶՈՒ գլխավոր շտաբի ղեկավար կազմի գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն ու կազմակերպչական, վարչաիրավական և վերլուծա-հսկողական ապահովումը,
2. ԶՈՒ գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանումների փոխհարաբերությունների համակարգումը, ՀՀ պաշտպանության նախարարի, գլխավոր շտաբի պետի, գլխավոր շտաբի պետի տեղակալների հրամանները, կարգադրությունները, հանձնարարականները կատարողներին հասցնելը և կատարման հսկողությունը,

3. ԶՈՒ գլխավոր շտաբի լիազորություններին վերաբերող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման կազմակերպումը և սահմանված ընթացքի ապահովումը,
4. ԶՈՒ գլխավոր շտաբի ղեկավար կազմի ամենօրյա գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման ու նյութատեխնիկական միջոցներով ապահովման կազմակերպումը,
5. Գլխավոր շտաբի պետի հրամանների, կարգադրությունների նախագծերի մշակումը, նախապատրաստումը, ստորագրման ներկայացումը և կատարողներին հասցնելը,
6. Զինծառայողների, քաղաքացիների նամակների, բողոքների, առաջարկությունների և դիմումների ընդունումը, հաշվառումը և ուսումնասիրումը, դրանց պատասխանների նախագծերի նախապատրաստման կազմակերպումն ու ստորագրման ներկայացումը,
7. իր իրավասության սահմաններում պաշտպանության նախարարության աշխատակազմի, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմից դուրս կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ԶՈՒ գլխավոր շտաբի վարչությունների, առանձին բաժինների, զորամիավորումների և զորամասերի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության իրականացումը,
8. իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ հրթիռային զորքերը և հրետանին համալրված է հրթիռային, հրետանային և հակատանկային բրիգադներով, գնդերով, առանձին հրետանային և ռեակտիվ հրետանային դիվիզիոններով:

ՀՀ ԶՈՒ հրթիռային և հրետանային զորամասերի ծառայության կազմակերպման գործում մեծ է ՀՀ ԶՈՒ հրթիռային զորքերի և հրետանու վարչության դերը:

ՀՀ ԶՈՒ հրթիռային զորքերը և հրետանին վերազինվում են մեծ հեռահարությամբ, գերճշգրիտ հրթիռային, համազարկային կրակի ռեակտիվ համալիրներով և հակատանկային կառավարվող հրթիռային համակարգերով, ինչը հնարավորություն է տալիս բարձր արդյունավետությամբ խոցելու ինչպես մեծ հեռավորության վրա գտնվող հակառակորդի ռազմավարական օբյեկտները, այնպես էլ պաշտպանության ամբողջ խորությամբ կենդանի ուժն և զրահատեխնիկան:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ ավիացիայի վարչության հիմնական խնդիրներն են.

1. օդից ցամաքային զորքերի կրակային աջակցումը,
2. անձնակազմի և բեռների օդային տեղափոխում:
3. ավիացիայի ստորաբաժանումների մշտական մարտական պատրաստականության վիճակի պահպանումը:

ՀՀ ԶՈՒ ավիացիայի վարչության հիմնական գործառույթներն են.

1. ուսումնամարզական թռիչքների իրականացման կազմակերպումը,
2. ռազմական տեխնիկան մարտունակ վիճակում պահելու անհրաժեշտ միջոցառումների իրականացումը,
3. ըստ անհրաժեշտության՝ որոնողական-փրկարարական աշխատանքների իրականացումը և այլն:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ԿԱՊԻ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ԱԿՀ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի կապի վարչությունը համապատասխան կառույցների և ստորաբաժանումների միջոցով ղեկավարում էր կապի զորքերը, իրականացնում էր կապի միջոցների և նյութերի մատակարարում, կապի միջոցների վերանորոգման աշխատանքներ: Կապի կազմակերպմանը զուգահեռ ստեղծվել է նաև ուսումնանյութական բազան, պատրաստվել են ուսումնական ծրագրերը:

Կատարելագործվել է զորամասերի և ստորաբաժանումների ազդարարման և կապի կազմակերպման համակարգը: Իրականացվում են կապի համակարգի թվայնացման աշխատանքները: Կատարելագործվել է տվյալների փոխանակման համակարգը. կատարվել են զինված ուժերի էլեկտրոնային փոստի զարգացման և ավտոմատ կառավարման համակարգերի ներդրման աշխատանքները: Բացի այդ, նախագծվել և կառուցվել են լոկալ ցանցեր համապատասխան ծրագրային ապահովմամբ, որոնք ՀՀ զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում ավտոմատացրել են մի շարք գործառույթներ՝ էականորեն բարձրացնելով խնդիրների կատարման որակը:

Կապի համակարգի զարգացման ուղղություններից է նրա թվայնացումը: Ստեղծվում է օպտիկաթելային կապի գծերով և համապատասխան թվային սարքավորումներով կազմակերպվող թվային գծային ցանց, ինչն ապահովում է ավտոմատ հեռախոսային կապ: Ներկայումս գործում է թվային հեռախոսային ավտոմատ կապ, որը գործում է բարձր արագությամբ թվային հոսքերով՝ ապահովելով բարձրորակ կապ: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և համակարգի հետագա կատարելագործումը պլանավորված է:

Կապի համակարգի կատարելագործման հաջորդ ուղղությունը՝ ռադիո և ռադիոռելեային կայանների վերազինումն է նոր տիպի թվային կայաններով:

Կապի հանգույցներում արդեն սկսվել է հայրենական արտադրության կայանների ներդրումը: Այս ամենի հետ զուգահեռ, հաշվի առնելով կապի համակարգի

կատարելագործման ուղղվածությունը, կատարվել են և շարունակվում են իրականացվել կապի զորամասերի և ստորաբաժանումների կառուցվածքային ու հաստիքային փոփոխություններ, իրականացվում են աշխատանքներ կապի զորքերում անձնակազմի պատրաստության ուղղությամբ:

Կարևորելով կապավորների մասնագիտական պատրաստության և դաշտային մարզվածության խնդիրը՝ յուրաքանչյուր տարի ՀՀ զինված ուժերում պլանավորվում և անցկացվում են կապի զորքերի մարտավարա-մասնագիտական զորավարժություններ: Բացի այդ մեծ տեղ է հատկացվում միջազգային, հատկապես հայ-ռուսական համագործակցությանը և համատեղ զորավարժություններին, որոնք անցկացվում են բարձր մակարդակով: Հայաստանի Հանրապետության պաշտպանական գերատեսչության և ԱՄՆ եվրոպական հրամանատարության միջև համագործակցությունը վերընթաց զարգացում է ապրում, կյանքի են կոչվում մի շարք ծրագրեր:

Կապի համակարգն այն օղակն է, որը հատկապես բազմազան գործողությունների իրականացման համար հիմնարար նշանակություն ունի, դրանից է կախված համագործակցության արդյունավետությունն ու փոխհամաձայնեցվածությունը: Ուստի զորավարժությունները ոչ միայն նպաստում են դրանց մասնակցող ստորաբաժանումների և մասնագետների կարողությունները ստուգելու խնդրի լուծմանը, այլև լավ առիթ են արդյունավետ մեխանիզմներ մշակելու և միասնաբար առաջադրված խնդիրները կատարելու համար:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ազատամարտի ընթացքում ստեղծվեցին հրամանատարական կետեր, զորամասերի և ստորաբաժանումների կառավարման ցանց և մի ամբողջ զենիթային հրթիռային ու ռադիոլոկացիոն համակարգ, որն էլ դրվեց մարտական հերթապահության:

Մոտոհրաձգային գնդերում և բրիգադներում ստեղծվեցին միաժամանակ հակաօդային պաշտպանության թեթև օղակներ, որոնք հետագայում վերածվեցին մարտկոցների և դիվիզիոնների:

Զենիթային հրթիռային տեխնիկայի ճիշտ տեղաբաշխումը և արդյունավետ օգտագործումը երաշխիք է հանդիսանում հակառակորդի օդային ուժերի կասեցմանը, մեր զորքերի ապահով առաջխաղացմանը և զորքերի ողջ անձնակազմի մարտական ոգու բարձրացմանը :

Սկսած 1999թ. Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության հետ համատեղ մարտական հերթապահություն են իրականացնում նաև Հայաստանի Հանրապետության ՀՕՊ զորքերը:

ՀՕՊ ԶՈՐՔԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ

ՀՀ օդային տարածությունում պետական սահմանի անառիկության ապահովումը, իսկ ԱՊՀ մասնակից պետությունների ՀՕՊ միացյալ համակարգի կազմում՝ ՌԴ ռազմական բազայի ՀՕՊ և ավիացիայի ուժերի ու միջոցների հետ, հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանի օդային տարածությունում, ԶՈՒ ՀՕՊ զորքերի առջև դրված մարտական խնդիրների կատարումը:

ՀՕՊ ԶՈՐՔԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ

- շարունակել ՀՕՊ զորքերի մարտական պատրաստականության վիճակի պահպանումը, բարձրացնել ՀՕՊ զորամասերի գործունեության արդյունավետությունը,
- օդային տարածությունում պետական սահմանի (շփման գծի) խախտումները կանխարգելելու և բացառելու, հերթապահ ուժերով ու միջոցներով օդային հակառակորդի հանկարծակի հարվածները հետ մղելու նպատակով հերթապահ ուժերն ու միջոցները մշտապես պահել համապատասխան պատրաստականության վիճակում,
- կատարելագործել զորքերի մարտական կառավարման համակարգը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ինժեներական զորքերի կողմից զորամիավորումների, միավորումների և զորամասերի պաշտպանական գոտիներում և տեղամասերում շարունակվում է ամրաշինական կառույցների սարքավորման, պայթյունային և ոչ պայթյունային արգելափակոցների տեղադրման մեծածավալ աշխատանքների իրականացումը: Հատկապես նշանակալի և արդյունավետ ծրագրեր են իրականացվել մարտական հերթապահություն իրականացնող անձնակազմի կենսունակության բարձրացման և կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ: Բացի այդ, ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի ստորաբաժանումները հումանիտար ականազերծման աշխատանքներ են իրականացնում ՀՀ մարզերում, ինչպես նաև ՆԱՏՕ-ի հետ համագործակցության շրջանակներում խաղաղապահ առաքելություն է իրականացրել 2003-2007թթ.՝ Իրաքում,2010թ.-ից՝ Աֆղանստանում:
ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը մշտական աշխատանք է տանում առաջավոր փորձի ուսումնասիրման, նոր տեխնոլոգիաների ներդրման, ժամանակակից ինժեներական սպառազինության միջոցների ստեղծման ուղղությամբ:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԶՈՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ռադիոէլեկտրոնային պայքարը (ՌԷՊ) զորքերի՝ նպատակով, խնդիրներով, տեղով և ժամանակով համաձայնեցված միջոցառումների և գործողությունների միասնությունն է՝ ուղղված հակառակորդի զորքերի (ուժերի) և զենքի ղեկավարման համակարգերի ու միջոցների հայտնաբերմանը, կրակային խոցմանը, զավթմանը (շարքից դուրս բերմանը) և ռադիոէլեկտրոնային ճնշմանը, ինչպես նաև սեփական զորքերի (ուժերի) և զենքի ղեկավարման համակարգերի և միջոցների ռադիոէլեկտրոնային պաշտպանությանը, հակառակորդի հետախուզական տեխնիկական միջոցների հակազդմանը:

Ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցառումներն իրականացվում են զորատեսակների և հատուկ զորքերի կողմից ղեկավարման կետերի և ռադիոէլեկտրոնային օբյեկտների կրակային խոցման (ոչնչացման, գրավման, շարքից դուրս բերման) գործողությունների և հետախուզական, օպերատիվ քողարկման ու այլ օպերատիվ ապահովման տեսակների հետ

համատեղ:

Խաղաղ ժամանակ ռադիոէլեկտրոնային պայքարի հերթապահ ուժերն ու միջոցները հետախուզում են հակառակորդի ռադիոէլեկտրոնային միջոցների և առաջնահերթ օբյեկտ-ների ավտոմատ ղեկավարման համակարգերը և մշտապես հետևում են դրանց:

Ռադիոէլեկտրոնային պայքարի նպատակներն են.

1. Հակառակորդի զորքերի (ուժերի) ղեկավարման համակարգերի ապակազմակերպումը,
2. Նրա զենքի, մարտական տեխնիկայի և հետախուզական տեխնիկական միջոցների կիրառման արդյունավետության նվազեցումը,
3. Յուրային զորքերի (ուժերի) և զենքի ղեկավարման համակարգերի և միջոցների աշխատանքի կայունության բարձրացումը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՌԱԴԻԱՑԻՈՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանությունը զինված ուժերի բաղկա-ցուցիչ մասն է և մարտական ապահովման ձևերից մեկը:

Ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանության հիմնական խնդիրներն են՝

1. Ռադիացիոն, քիմիական կենսաբանական իրադրության բացահայտում և գնահատում,
2. Զորքերի (ուժերի) պաշտպանությունը զանգվածային խոցման զենքերից, ռադիացիոն, քիմիական և կենսաբանական վտանգավոր օբյեկտների ավերածությունների (վթարների) խոցման գործոններից,
3. Զորքերի և օբյեկտների տեսանելիության նվազեցումը,
4. Հրանետային-հրկիզող միջոցների կիրառում,
5. Ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանության միջոցառումների իրականացումը ռադիացիոն, քիմիական կենսաբանական վտանգավոր օբյեկտներում ավերածությունների (վթարների) հեևտևանքները վերացնելիս:

Զորքերի (ուժերի) պաշտպանությունը զանգվածային խոցման զենքերից, ռադիացիոն, քիմիական և կենսաբանական վտանգավոր օբյեկտների ավերածությունների (վթարների) խոցման գործոններից իրականացվում է զորքերի կողմից ժամանակին պաշտպանական միջոցների կիրառումը ռադիոակտիվ, թունավոր, այլ տոքսիկ քիմիական նյութերի և կենսաբանական միջոցների ներգործությամբ, հակառակորդի հետախուզական և զենքի ղեկավարման միջոցների աէրոզոլային հակազդմամբ, ռադիոկլանող նյութերի և քողարկող փրփուրային ծածկույթների օգտագործմամբ, հրանետային-հրկիզող միջոցների կիրառմամբ:

Ռադիացիոն, քիմիական կենսաբանական պաշտպանությունն իրականացնում է նաև ՌՔԿ հետախուզության վարում, ՌՔԿ իրավիճակի կանխատեսում և հսկողություն, ռադիացիոն, քիմիական և կենսաբանական վտանգավոր օբյեկտների ավերածությունների (վթարների) ժամանակ տեղանքի, օդի վերգետնյա շերտի ՌՔԿ վարակի մասշտաբների, աստիճանի գնահատում վարակի ազդեցությունը բնակչության և զորքերի վրա:

ՌՔԿՊ զորքերի վարչությունում աշխատանքներ են տարվում նոր զինատեսակների ստեղծման և հայրենական արտադրության կազմակերպման ուղղությամբ: Մշակվել և ստեղծվել է ՏԲԳ-1 թերմոբարիկ սկզբունքով մարտագլխիկը ՌՊԳ նռնականետի համար, տարվում են աշխատանքներ նոր զինատեսակների ստեղծման ուղղությամբ:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ԶՈՐՔԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի զորքերի ծառայության վարչությունը ՀՀ ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանում է, որն ապահովում է զորամասերում ներքին, պահակային և կայազորային ծառայությունների կազմակերպման, ծառայության ընթացքում զինծառայողների անվտանգության, կայազորներում ու զորամասերում զինվորական կարգուկանոնի պահպանման ուղղությամբ ԶՈՒ ԳՇ գործունեության իրականացումը:

Վարչության խնդիրներն են՝

1. զորամասերում զինվորական կարգուկանոնի պահպանման, ժամանակի ճշգրիտ բաշխման ու օրվա կարգացուցակի կատարման գործընթացի վերահսկումը,
2. զորամասերի տեղակայման վայրերում զինամթերքի, մարտական տեխնիկայի, պահեստների և այլ զինվորական (ռազմական) օբյեկտների պահպանության ու պաշտպանության կազմակերպման, զինծառայողների առողջության պահպանման ու կենցաղի կազմակերպման, ինչպես նաև սանիտարահիգիենիկ միջոցառումների կանոնավոր անցկացման վերասկողությունը,
3. կայազորներում զինվորական կարգուկանոնի հաստատմանն ուղղված տարբեր միջոցառումների կազմակերպման ու անցկացման գործընթացին աջակցելը,
4. զինված ուժերում տեղի ունեցած դեպքերի ու պատահարների, զինվորական ծառայության անվտանգության վիճակի վերլուծությունը,
5. ներքին և պահակային ծառայության անվտանգության ապահովման գործնական համալիր միջոցառումների կազմակերպչական ու մեթոդական ապահովումը:

Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1. զորքերի ծառայության հիմնական միջոցառումների պլանավորումը, զորքերում ներքին, պահակային ու կայազորային ծառայությունների, ինչպես նաև զինվորական ծառայության անվտանգության կազմակերպչական ու մեթոդական ապահովումը,
2. զորամասերում ներքին, պահակային ծառայությունների ճիշտ կազմակերպմանն ի նպաստ պլանային և հանկարծակի ստուգումների անցկացումը,
3. զորամասերում (ստորաբաժանումներում) ղեկավար փաստաթղթերի համապատասխանության, ինչպես նաև հրամանների, կարգադրությունների կատարման նկատմամբ հսկողության սահմանումը,

4. զորքերի ծառայության կազմակերպման ուղղությամբ կայազորների պետերին, զորամիավորումների, միավորումների ու զորամասերի (ստորաբաժանումների) հրամանատարներին մեթոդական և գործնական օգնության ցուցաբերումը,
5. զորամասերում տեղի ունեցած դեպքերի ու պատահարների հաշվառումը և ծառայողական քննությունների անցկացումը (վերադաս հրամանատրության հանձնարարությամբ),
6. զորքերում ծառայության կազմակերպմանն ի նպաստ լավագույն զորամասերի ներկայացումն ու առաջավոր փորձի տարածումը,
7. օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթների իրականացումը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչության գործունեությունն ուղղված է զինծառայողների բարոյահոգեբանական պատրաստության, իրավունքների, սոցիալական երաշխիքների և արտոնությունների ապահովման աջակցմանը, անձնակազմի զինվորական կարգապահության ամրապնդմանը, մշակութաժամանցային աշխատանքների ու հայրենասիրական դաստիարակության կազմակերպմանը, կին զինծառայողների հետ տարվող աշխատանքների համակարգմանը:

Վարչությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. Ապահովում է ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի, հակառակորդի և յուրային զորքերի բարոյահոգեբանական վիճակի,հակառակորդի տեղեկատվական-հոգեբանական ներազդեցության ուսումնասիրման, վերլուծության և գնահատման աշխատանքների իրականացումը:

2. Ապահովում է բարոյահոգեբանական պատրաստության և ուսումնադաստիարակչա-կան գործընթացի կատարելագործումը,բարոյահոգեբանական ապահովման մարմինների ուսուցման, որակավորման ու մասնագիտական վերապատրաստման կազմակերպումը:

3. Աշխատանքներէտանում զինծառայողների մոտ պետական մտածողության զարգացման, անձնակազմի մոտ գաղափարականհամոզվածություն, կայուն բարոյահոգեբանական հատկանիշներ, հայրենիքի պաշտպանության գործում կայուն համոզմունքներ, ազգային ևմշակութային արժեքների հանդեպ սիրո ու հավատարմության զգացումներ ձևավորելու ուղղությամբ:

4. Համակարգում է զորքերի հոգեբանական պատրաստության և կայունության ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքները,զինծառայողների հոգեկան վիճակի վերականգնումը, միջոցներ ձեռնարկում հոգեբանական կորուստների նվազեցման ուղղությամբ:

5. Վերահսկում է զինծառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրմանկատարումը, իրականացնում է զինվորական կոլեկտիվներում սոցիալ-հոգեբանական գործընթացների ուսումնասիրում և հնարավոր զարգացման կանխատեսում:

6. Զինված ուժերի հոգևոր առաջնորդության հետ սերտ համագործակցությամբ կազ-
մակերպում է անձնակազմի հոգևոր-բարոյականդաստիարակությունը:

7. Միջոցներ է ձեռնարկում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքնե
րի, սոցիալական երաշխիքների ուարտոնությունների ապահովման աջակցման ուղղությամբ, մ
ասնակցում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների՝ դիմում-
ներին բողոքների քննարկմանը, լուծմանն ու խորհրդատվության տրամադրմանը:

8.Մշտական և գործնական հսկողություն է իրականացում զինծառայողներին բավարարման սահմանված նորմերը լիովին հասցնելու, միջոցներ ձեռնարկում խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ:

9. Համակարգում էզինծառայողների հոգեկան և զգացմունքային վիճակի մշտական ու բազմակ
ողմանի զարգացման, անձնակազմի լիարժեքհանգստի ու ժամանցի կազմակերպմանն ուղղվա
ծ աշխատանքները, միջոցներ է ձեռնարկում մշակույթի ու արվեստի միջոցով անձնակազմի
բարոյամարտական հատկանիշների ձևավորման, զինծառայողների հոգեկանզգացմունքային կ
այուն վիճակի պահպանման ուղղությամբ:

10. Հսկողություն է իրականացնում զորքերի մշակութագեղարվեստական սպասարկման ուղղու
թյամբ, պլանավորում և Զինված ուժերի երգի նպարի համույթի ուժերով զորամասերում անցկա
ցնում է համերգաշարեր:

12. ՈՒսումնասիրում ու ստորաբաժանումներն ապահովում է ընթացիկ բավարարման դաս-
տիարակության տեխնիկական միջոցներով, վերահսկում դրանց նպատակային օգտա-
գործումը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը զինված ուժերի կառուցվածքային ստորաբաժանում է, որը խաղաղ և պատերազմական ժամանակ կազմակերպում է ՀՀ զինված ուժերում անձնա-
կազմի, զինծառայողների, քաղաքացիական հատուկ ծառայողների, նրանց հավասարեցված անձանց, զինծառայողների ընտանիքների անդամների, վարժահավաքներում ընդգրկված զինապարտների ու քաղաքացիների առողջության առաջնային պահպանման, բուժկանխար-
գելիչ և բուժտարհանիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները, անձնակազմի բժշկական օգնության, բուժգույքով ու դեղորայքով ապահովման և դրանց նպատակային օգտագործման վերահսկողության աշխատանքը, մասնակցում է ռազմա-
բժշկական կադրերով զինված ուժերի համալրմանը:

Վարչության լիազորությունները սահմանվում են ՀՀ սահմանադրությամբ, «Բնակչության բժշկական ապահովման մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ՀՀ պաշտպանության նախարարի և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամաններով, կարգադրություններով ու զինված ուժերի ռազմաբժշկական վարչություն կանոնադրությամբ:

Ռազմաբժշկական վարչությունն իր գործունեության նպատակներից և խնդիրներից բխող գործառույթները իրականացնում է անմիջական ենթակայության տակ գտնվող ռազմաբժշկա-

կան հաստատությունների ու զորամասերի, ինչպես նաև ուղղակի ենթակայության բժշկական ծառայությունների միջոցով:

ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

ՀՀ զինված ուժերի անձնակազմի առողջության պահպանումը, ամրապնդումը, հիվանդ և վիրավոր զինծառայողների ամբուլատոր, ստացիոնար և վերականգնողական բուժօգնության կազմակերպումը, ռազմաբժշկական փորձաքննության լիարժեքորեն կազմակերպման ապահովումը,

- ՀՀ զինված ուժերում անցկացվող միջոցառումների բժշկական ապահովման լիարժեք կազմակերպումը,
- Բժշկական սարքավորումների, գույքի, տեխնիկայի, դեղա-միջոցների, վիրակապական և ախտահանիչ նյութերի ձեռքբերման կազմակերպումը, դրանց նպատակային բաշխումը և արդյունավետ կիրառման վերահսկողությունը,
- ՀՀ զինված ուժերի անձնակազմի համաճարակաբանական անվտանգության պահպանումն ու ապահովումը, համալիր բուժական- կանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը և դրանց լիարժեք կատարման վերահսկողությունը,
- Ռազմաբժշկական բնագավառում գիտական, ուսումնամեթոդական ու գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը և համապատասխան մասնագիտական գրականության մշակումը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության խնդիրներն ու գործառույթներն են՝

Գլխավոր շտաբի պահպանման ծախսերի նախահաշիվների և բյուջետային հայտերի մշակման ու ներկայացման ապահովումը, կառուցվածքային ստորաբաժանումների ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունների ամփոփմանն առնչված հարաբերությունների կարգավորումը, կառուցվածքային ստորաբաժանումների հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման ապահովումը, պահպանման ծախսերի գործընթացին համապատասխան նորմատիվ կարգավորման մեթոդական ապահովման կազմակերպումը, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, կառուցվածքային ստորաբաժանում-ների ապրանքանյութական արժեքների հաշվառումը՝ պլանավորված ցուցանիշներին համապատասխան և այլն:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստության վարչության նպատակն է ՀՀ ԶՈՒ անձնակազմի ռազմամասնագիտական պատրաստության, նրա ֆիզիկական տոկունության, անձնակազմ-ների, հաշվարկների, ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների ներդաշնակման անհրաժեշտ մակարդակի հասցնելը, պահպանումը և կատարելագործումը՝ իրենց նախորոշմանը համապատասխան մարտական և այլ խնդիրների կատարման համար:

ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստության վարչության խնդիրներն են՝

- Մարտական խնդիրների կատարման համար ստորաբաժանումների, զորա-մասերի և զորամիավորումների մշտական մարտական պատրաստվածության պահպանումը,
- սպաներին և ենթասպաներին կայուն մասնագիտական գիտելիքների և ունակությունների ներարկումը, իրենց մոտ հրամանատարական հատկությունների, ենթականերին ուսուցանման և դաստիարակման մանկավարժական հմտությունների, ինչպես նաև անձնակազմերի, հաշվարկների, ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների ղեկավարման հմտությունների զարգացումը և նրանց հետագա կատարելագործումը,
- անձնակազմերի, հաշվարկների, ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների ներդաշնակումը, դաշտային վարժվածության կատարելագործումը,
- զորքերին հավաքական անվտանգության միացյալ ուժերի կազմում գործողություններին նախապատրաստումը,
- ուսուցման ընթացքում մարտի (մարտավարական գործողությունների) կազմակերպման և վարման առկա կանոնադրային դրույթների ստուգումը, զորքերի մարտական կիրառման նոր ձևերի մշակումը և տարածումը,
- անձնակազմի մոտ բարձր բարոյահոգեբանական հատկանիշների, զգոնու-թյան, կարգապահության, կատարողականության և զինվորական ընկերակցության դաստիարակումը,
- պահեստազորային սպաների նախապատրաստումը,
- մոտոհրաձգային, հրաձգային և տանկային ստորաբաժանումների համար բարձր դաշտային փորձվածություն և մասնագիտական պատրաստություն ունեցող կրտսեր հրամանատարների և մասնագետների պատրաստումը, ինչպես նաև ավագ ենթասպա մասնագետների գիտելիքների և ունակությունների կատարելագործումը,
- ուսումնական նյութատեխնիկական բազայի ստեղծումը, զարգացումը և կատարելագործումը,
- զորքերի կիրառման նոր ձևերի և մեթոդների համաձայն ծրագրային, կանոնադրային և այլ ձեռնարկների դրույթների կարգավորումը և համապատասխանեցումը ուսուցման սկզբունքների պահանջներին:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության ամենօրյա գործունեությունը նպատակաուղղված է ՀՀ զինված ուժերի ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակաշրջանի պայմաններում, տեխնիկական ապահովման խնդիրների լուծմանը, այսինքն՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի, զինամթերքի և ռազմատեխնիկական ունեցվածքի ամբողջական հաշվառման, տեխնիկական սպասարկման, վերականգնման, արդիականացման, թարմացման, պաշարների կուտակման և պահպանման ծավալուն գործընթացին:

ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունն իրականացնում է տեխնիկական ապահովման համակարգի շրջանակներում հետևյալ գործառույթները՝

- գիտատեխնիկական բաղադրիչի (պաշարների, անխափան գործող արտադրական կարողությունների և այլն) ստեղծման ուղղությամբ միջոցառումների պլանավորումը, նախապատրաստումն ու անցկացումը,
- սպառազինության ու ռազմական (հատուկ) նոր տեխնիկայի, չափման միջոցների նմուշների, համալիրների, համակարգերի և այլնի ստեղծման հնարավորությունների բազմակողմանի հետազոտումն ու նախագծումը կամ արդիականացումը,
- կուտակումը, շարակարգումը, պահուստների պահպանումը,
- ՍՌՏ շահագործումը, պահպանումը, վերականգնումը (նորոգումը), օգտահանումը և թափոնումը (վերացումը),
- տեխնիկական ապահովման մարմինների զորահավաքային նախապատրաստումը,
- ինժեներատեխնիկական կազմի ու կրտսեր մասնագետների պատրաստումը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ԹԻԿՈՒՆՔԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության խնդիրներն են.

1. ՀՀ զինված ուժերի թիկունքային ապահովման պլանավորումն ու կազմակերպումը,
2. ՀՀ ԶՈՒ թիկունքի մշտական մարտական և զորահավաքային պատրաստականության ապահովումը,
3. ՀՀ ԶՈՒ թիկունքի օպերատիվ թիկունքային, մարտական և հատուկ պատրաստության կազմակերպումը,
4. ՀՀ ԶՈՒ թիկունքի ենթակա զորամասերի դաստիարակչական աշխատանքի, զինվորական կարգապահության պահպանման, անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի և զինվորական ծառայության անվտանգության ապահովումը,
5. ՀՀ ԶՈՒ թիկունքի ենթակա զորամասերում և կազմակերպություններում սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների պահպանման կազմակերպումը:

Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. ՀՀ ԶՈՒ թիկունքի զորահավաքային ծավալման սխեմայի վարման, թիկունքի ծառայությունների գծով նյութական միջոցների ծախսի նորմերի մշակումը,
2. ՀՀ ԶՈՒ թիկունքային ապահովման պլանների և միջոցառումների մշակումը,

3. ՀՀ միջազգային ռազմական համագործակցության պայմանագրերին և պլաններին համապատասխան ԶՈՒ կիրառման համատեղ պլանավորման մասնակցությունը,
4. իր իրավասության սահմաններում պետությունների ԶՈՒ և ռազմական դաշինքների, կազմակերպությունների հետ փոխհամագործակցության պլանավորման մասնակցությունը,
5. կենտրոնական ենթակայության թիկունքի ենթակա զորամասերի ու կազմակերպությունների տեղաշարժի և ժամանակին բացազատման կազմակերպումը և դրա նկատմամբ հսկողության իրականացումը,
6. Վարչության ենթակա զորամասերում և այլ ստորաբաժանումներում սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների պահպանման կազմակերպումը,
7. ՀՀ ԶՈՒ թիկունքի զորամասերի և կազմակերպությունների կազմակերպչա-հաստիքային կառուցվածքի կատարելագործման առաջարկությունների նախապատրաստումը,
8. ՀՀ ԶՈՒ թիկունքի ծառայությունների գծով փաստաթղթային ստուգումների անցկացումը,
9. ՀՀ պաշտպանության նախարարի և ԶՈՒ ԳՇ պետի՝ ԶՈՒ մարտական պատրաստականության վերաբերյալ դիրեկտիվների, հրամանների և կարգադրությունների ճշգրիտ ու ժամանակին կատարման նկատմամբ հսկողության, ինչպես նաև թիկունքի ենթակա զորամասերին ու այլ ստորաբաժանումներին առաջադրված խնդիրները ժամանակին հասցնելու նկատմամբ վերահսկողության իրականացումը,
10. ՀՀ ԶՈՒ թիկունքային ապահովման կազմակերպման, զորքերի թիկունքային ապահովման, ՀՀ ԶՈՒ թիկունքի զորահավաքային պատրաստականության և զորահավաքային ծավալման, ՀՀ ԶՈՒ թիկունքի ծառայությունների, ենթակա զորամասերի և կազմակերպությունների, մարտական և զորահավաքային պատրաստականության ստուգումների անցկացումը,
11. թիկունքի ղեկավարման համակարգի կազմակերպման պլանավորումը, ՀՀ ԶՈՒ կառավարման համակարգի մշակման, պլանավորման և հետագա զարգացման պլանավորումը,
12. թիկունքի ենթակա զորամասերի ու այլ ստորաբաժանումների զորահավաքային պահանջարկի հաշվառման, համալրման (լրահամալրման) պլանավորման և թիկունքի կրտսեր մասնագետների պատրաստման կազմակերպումն ու իրականացումը,
13. ՀՀ ԶՈՒ թիկունքի, ՀՀ ԶՈՒ թիկունքի զորամասերի և այլ ստորաբաժանումների զորահավաքային պատրաստականության և զորահավաքային ծավալման, ՀՀ ԶՈՒ թիկունքի ամրակցված սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների պահանջարկի ապահովման աշխատանքների, ՀՀ ԶՈՒ տրանսպորտային, նյութական, անասնաբուժական ապահովման և վերստուգիչ աշխատանքների, շրջակա միջավայրի պահպանման կազմակերպումն ու ղեկավարումը,
14. ՊՆ կադրերի և ռազմական կրթության, ՀՀ ԶՈՒ ԳՇ կադրերի և կազմ-զորահավաքային վարչությունների հետ համագործակցելով՝ ՀՀ ԶՈՒ թիկունքի համալրումն ու կադրերի պատրաստումը,
15. թիկունքի ենթակա զորամասերում և այլ ստորաբաժանումներում մարտական պատրաստության պլանի կատարման վերահսկումը,

16. ՀՀ ԶՈՒ թիկունքի ծառայությունների, ենթակա զորամասերի և այլ ստորաբաժանումների, մարտական և զորահավաքային պատրաստականության վիճակի ստուգումների անցկացումը,
17. թիկունքի ծառայությունների գծով նյութական միջոցների ծախսի նորմերի մշակման կազմակերպումը,
18. ՀՀ ԶՈՒ թիկունքի անվանակարգի սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների պահանջարկի որոշման և ապահովման իրականացման աշխատանքի ղեկավարումը,
19. ՀՀ ԶՈՒ թիկունքի զորամասերում և այլ ստորաբաժանումներում օպերատիվ-թիկունքային, մարտական և հատուկ պատրաստականության, ռազմագիտական աշխատանքի կազմակերպման ղեկավար փաստաթղթերի մշակումը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կազմակերպչական–զորահավաքային վարչությունը Գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանում է, որը խաղաղ և պատերազմի ժամանակ ապահովում է զինված ուժերի զորահավաքային ծավալման, կազմակերպչական - հաստիքային կառուցվածքի, ժամկետային պարտադիր ծառայության և շարքային կազմի պայմանագրային զինծառայողներով համալրման ու հաշվառման, զորքերը տեխնիկայով, սպառազինությամբ, նյութատեխնիկական միջոցներով հաշվառման ու համալրման ուղղություններով Գլխավոր շտաբի գործունեության իրականացումը:
Վարչության հիմնական խնդիրները և նպատակներն են:

ՀՀ զինված ուժերի զորամասերի և ստորաբաժանումների մշտական զորահավաքային պատրաստականության վիճակի և ՀՀ տարածքում զորահավաքային միջոցառումների կազմակերպման գործընթացի ապահովումը,

- ՀՀ զինված ուժերում զորահավաքային միջոցառումների ղեկավարման և իրականացման համար ղեկավար փաստաթղթերի մշակման գործընթացի ապահովումը,
- ՀՀ զինված ուժերի զորահավաքային ծավալման նախապատրաստության ապահովումը,
- ՀՀ զինված ուժերի զորահավաքային միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողությունը,
- ՀՀ զինված ուժերի զորահավաքային պատրաստության պլանավորումը, վերահսկումը,
- ՀՀ զինված ուժերի զորամասերի և ստորաբաժանումների հաստիքային կառուցվածքների արդիականացման ու հետագա զարգացման ապահովումը,
- ՀՀ զինված ուժերի զորամասերը ժամկետային պարտադիր ծառայության և շարքային կազմի պայմանագրային զինծառայողներով համալրման և հաշվառման գործընթացի ապահովումը:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայություն

ՀՀ զինված ուժերի ռազմատեղագրական ծառայության հիմնական խնդիրներն են.

- զինված ուժերի մարտական պատրաստականության տեղագրագեոդեզիական ապահովումը,
- մարտական գործողությունների տեղագրագեոդեզիական ապահովումը:

ՀՀ ԶՈՒ ռազմատեղագրական ծառայությունը ՀՀ զինված ուժերում ներդնում է նավիգացիոն համակարգը՝ զորքերը սպառազինվում են նավիգացիոն դիրքորոշման կայաններով, իրականացվում է նավիգացիոն շարժական համալիրներով ապահովումը: Ձեռք են բերվում տիեզերալուսանկարների վերծանման և թվային քարտեզագրության կայաններ: Զարգանում է նաև երկրատեղեկատվական համակարգերի կիրառման ոլորտը, որի համար շարունակվում է համալրվել թվային քարտեզների բազան:

ՀՀ ԶՈՒ ԳՇ գաղտնիության ռեժիմի ապահովման ծառայություն

ՀՀ ԶՈՒ ԳՇ ութերորդ բաժինը ԶՈՒ գլխավոր շտաբի կառուցվածքային ստորաբաժանում է, որը խաղաղ և պատերազմական ժամանակ ապահովում է ՀՀ զինված ուժերում ծածկագրային ծառայության ու գաղտնիության ռեժիմի կազմակերպման, ապահովման, ղեկավարման և վերահսկողության ուղղությամբ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի գործունեության իրականացումը:

ԶՈՒ ԳՇ ստանդարտացման և չափագիտության ծառայություն

Բաժնի լիազորությունները սահմանվում են օրենքներով և այլ իրավական ակտերով, ՀՀ պաշտպանության նախարարի, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամաններով:

Բաժնի խնդիրներն ու գործառույթներն են՝

ՀՀ ԶՈՒ զորամասերի չափիչ միջոցների ստուգաչափումը, չափաբերումը և վերանորո-գումը, այլ զորքերի և Հայաստանի Հանրապետությունում տեղակայված Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի ստորաբաժանումների չափագիտական ապահովվածության հարցերով մեթոդական ու գործնական օգնության ապահովումը, հայտնաբերում է շահա-գործվող չափիչ միջոցների կառուցվածքային և շահագործման թերությունները և մշակում նրանց վերացման առաջարկությունները, ստուգում է չափագիտական ապահովվածության վիճակը, ցուցաբերում է տեխնիկական օգնություն՝ նոր չափիչ տեխնիկայի յուրացման և կադրերի պատրաստման գործում, մասնակցում է նոր չափիչ միջոցների փորձարկումներին և նրանց փորձնական շահագործմանը, քննարկում է նոր ստանդարտները, հրահանգները, առաջարկությունները և չափիչ միջոցների ստուգաչափման ու վերանորոգման մեթոդական ցուցումների նախագծերը և տալիս է եզրակացություններ և այլն: Հայ-ռուսական պաշտպանական համագործակցության պայմանագրերի շրջանակներում՝ չափագետ-մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը կատարվում է ՌԴ ակադեմիաներում:

Միջազգային համագործակցության ծրագրերի շրջանակներում յուրաքանչյուր տարի անցկացվում է ԱՊՀ մասնակից պետությունների զինված ուժերի չափագիտական ծառայությունների պետերի հավաք և համակարգող կոմիտեի նիստ:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային ծառայություն

ՀՀ պետական, կառավարական և գերատեսչական միջոցառումների, արարողությունների, հանդիսությունների և ծեսերի երաժշտական սպասարկումը: ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագա-խմբային բաժնի գործունեությունը սերտորեն կապված է զորքերի առօրյա կյանքի և նպատա-կաուղղված է զինծառայողների հայրենիքին և ժողովրդին անմնացորդ նվիրվածության, զինվորական պարտքի անբասիր կատարման ոգով դաստիարակությանը

ՀՀ զինված ուժերի ռազմանվագախմբային ոլորտի զարգացման համար, ինչպես նաև հաստիքային զինվորական նվագախմբերը գրագետ զինվորական դիրիժորական կադրերով համալրելու նպատակով, ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի և ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության նախաձեռնությամբ, ՀՀ պաշտպանության նախարարության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ղեկավարության միջնորդությամբ, ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց, համաձայն որի ՀՀ պաշտպանության նախարարության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի միջև կնքվեց երկկողմանի պայմանագիր՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետում զինվորական դիրիժորության խումբ ստեղծելու, զինվորական դիրիժորական կադրեր պատրաստելու համար::

ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի խնդիրներն են.

1. ՀՀ զինված ուժերի անձնակազմի գաղափարական, հայրենասիրական և մշակութային դաստիարակությունը երաժշտության միջոցով,
2. զինվորական նվագախմբերի համալրումը,
3. զինվորական նվագախմբերի ծառայողական գործունեության կազմակերպումը և պատրաստումը,
4. Պետական, կառավարական և գերատեսչական արարողությունների, ինչպես նաև հասարակական, մշակութային, զանգվածային և սպորտային միջոցառումների երաժշտական սպասարկումը,
5. շարային երգերի ուսուցումը և ազդանշանորդ - թմբկահարների պատրաստումը ստորաբաժանումներում:

ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային բաժինն իր նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները.

1. մասնակցում է զինվորական դիրիժորական կադրերի պատրաստմանը,
2. զինվորական նվագախմբերի ծառայողական գործունեության բարելավման և ուսուցման կատարելագործման նպատակով իրականացնում է համապատասխան աշխատանքներ,
3. կադրային և կազմզորահավաքային մարմինների հետ համատեղ դիրիժորներով և երաժիշտներով համալրում է զինվորական նվագախմբերը,
4. սահմանված կարգով կազմակերպում և անցկացնում է զինվորական նվագախմբերի և դիրիժորների համաբանակային մրցույթներ ու փառատոններ,

5. մասնակցում է զինվորական նվագախմբերը փողային և հարվածային գործիքներով ու դրանց կից պարագաներով ապահովելուն:

<<ՀՐՄՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ռ.ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Օգտագործված գրականության ցանկ

1. Լուրեր հայաստանից https://www.civilnet.am/news
2. ՀՀ ՊՆ պաշտոնական էջ https://mil.am/hy
3. ՆԶՊ դասագրքեր